

Արամ Ժորայի Գրիգորյան
տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ

Ծնվել է 1972 թվականի հունվարի 2-ին ՀՀ Սյունիքի մարզի Կապան քաղաքում: Ամուսնացած է: Ունի երկու դուստր:

Կրթությունը

1979-89թթ. սովորել է Կապանի թիվ 2 միջնակարգ դպրոցում:

1989 թվականին ընդունվել է Երևանի ճարտարապետաշինարարական ինստիտուտի Արդյունաբերական և քաղաքացիական շինարարության ֆակուլտետը: 1994 թվականին գերազանցությամբ ավարտել է ինստիտուտը՝ ստանալով «ինժեներ-շինարարի» որակավորում:

1994 թվականին ընդունվել է ԵրՃՇԻ ասպիրանտուրան:

Աշխատանքային գործունեությունը

1997 թվականի սեպտեմբերից աշխատում է ՀՊՃՀ Կապանի մասնաճյուղում որպես դասախոս:

1998-2001թթ. համատեղությամբ աշխատել է որպես մասնաճյուղի ուսումնական գծով տեսուչ:

2012 թվականի ապրիլից նշանակվել է Կրթության որակի ապահովման և վերահսկման բաժնի ավագ տեսուչ, իսկ 2013 թվականի փետրվարից՝ Բնական գիտությունների և տեղեկատվական համակարգերի ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար:

2013 թվականի սեպտեմբերից նշանակվել է Ծրագրամեթոդական աշխատանքների և կրթության կազմակերպման բաժնի պետ:

Գիտական և ուսումնամեթոդական գործունեությունը

Հեղինակ է հրատարակված 14 գիտական հոդվածների և 3 մեթոդական աշխատանքների: